Էջ 3

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-18/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/ 7
## N 11/205 - 2018

ք. Երևան

<<18>> << 05 >> 2018թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Եղիազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **11 339 850,90 (տասնմեկ միլիոն երեք հարյուր երեսունինը հազար ութ հարյուր հիսուն դրամ, իննսուն լումա)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար փոխլ փարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԱԾ** | **«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ** |
| **ք.Երևան, Նալբանդյան104** | **ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.** |
| **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | **«Արդշինբանկ» ՓԲԸ Մասիսի մ/ճ** |
| **Հ/հ 900011301067** | **Հ/հ 2472900158630000** |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ 03804898** |
| **Տնօրենի տեղակալ** | **Տնօրեն** |
| **Հակոբյան** | **Վ. Եղիազարյան** |

N 11/205 - 2018 «18» 05 Հավելված N 1
2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 18211100/1/10/2 | կիսավերարկու | ՀՀ, «ՄԱՍԻՍ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | Ձմեռային դեղնականաչավուն կիսավերարկու արհեստական մորթուց կարված օձիքով/հատ/: Կիսավերարկուի երեսացուն դեղնականաչավուն գույնի 2311 արտիկուլի կիսաբրդյա գործվածքից: Գործվածքի 1մ² մակերեսային խտությունը՝ 317գր., բաղադրությունը՝ 67% բուրդ, 33% պոլիէսթեր: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, ծալվող օձիքից և թևքերից: Օձիքը հանովի արհեստական մորթուց կարված: Ձևվածքն ուղիղ ուրվագծով, կոճկվում է 5 հատ դեղնականաչավուն գույնի կոճակ օղակներով, մշակված զաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Թևքերը երկկարանի ներկարված: Կիսավերարկույի և թևքերի եզրերը ծալված և վրակարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: Ռինի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: Տաք ներդիրը՝ սինտեպոն /թևքերը նույնպես/, օձիքից մինչև գոտկատեղ ներդիրը երկտակ: Կիսավերարկուի աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, որը մզդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Կիսավերարկուի օձիքին կոճկվում է լրացուցիչ մորթե օձիք, աստառով և երկշերտ ներդիրով: Օձիքը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և կիսավերարկուին կարված 5 կոճակներով: Կիսավերարկուի կոճակները՝ լանջափեշերին 18մմ, օձիքին և ծոցագրպանին 15մմ տրամագծով, պատրաստված ջերմադիմացկուն /չհալվող/ նյութից, 4 կարանցքներով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող, գույնը՝ դեղնականաչավուն: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Ապրանքը պետք լինի պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող | հատ | 13200,00 | 1056000 | 80 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 80 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը**՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | |
| 2 | 18221100/1/10/2 | անջրանցիկ հագուստ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Գարնանային-աշնանային կիսավերարկու/հատ/:** Գարնանային-աշնանային կիսավերարկու դեղնականաչավուն 4C5-KB-гл արտիկուլի դեղնականաչավուն գույնի անջրանցիկ գործվածքից, 1մ² մակերային խտությունը՝ 214գր., բաղադրությունը՝ 53% բամբակ, 43% պոլիէսթեր, տաք /սինտեպոն/ ներդիրով: Թիկունքամասը մշակվում է կոկետկայով: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից: Լանջափեշերը կոճկվում են 4 հատ 18մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված զաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Մեջքը՝ մեջտեղի կարով, թևքերը երկկարանի ներկարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: Ռեինի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: Ուսադիրների շրջանում 2 փակ օղակներ և 2 կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: Ներդիրը՝ /թիկունքը և թևքերը/ սինտեպոն: Աստառը, մգդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Ապրանքը պետք լինի պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը**՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | հատ | 7779,00 | 1244640 | 160 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 160 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |
| 3 | 18221200/1/10/2 | անջրանցիկ թիկնոցներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» | **Թիկնոց – ուսնոց /հատ/:** Անջրանցիկ դեղնականաչավուն կամ գունաքողարկված 13C9-KB -ПлПУ արտիկուլի | հատ | 8700,00 | 870000 | 100 | ք. Երևան , Այվազովս | 100 | 2018թ. սեպտեմ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՍՊԸ | գործվածքից, 1$մ^2$ մակերային խտությունը՝ 187գր., բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր,: Ձևածքն ուղիղ ուրվագծով: Թիկնոցը կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից և գլխանոցից: Լանջափեշերը կոճկվում են 5 հատ 20մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա՝ կողքերից ներկարված թեք միջանցիկ բացվածքներ, որոնք ներսից կոճկվում են երկուական 15մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով: Բացվածքների ներսից նույն լայնությամբ կարված գոտիներ, ձեռքերի համար: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Մեջքը՝ դեպի դուրս բացվող վերին կարով, թիկունքի մասը նույն կտորից երկտակ կարված: Թևքերը երկկարանի ներկարված, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գլխանոցը՝ հանվող, որը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 4 օղակներով և թիկնոցին կարված 4 հատ 15մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակներով: Գլխանոցի վրա կարված են նաև 3 հատ 15մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներ, սահմանված ձևի: Թիկնոցի կոճակները՝ պատրաստված է ջերմադիմացկուն /չհալվող/ նյութից, 4 կարանցքներով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 46/3 մինչև 58/5 չափս-հասակի: Ապրանքի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակը, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: | | | | | կու նրբ .5 | | բերի 30-ը |
| 4 | 18221400/1/10/2 | անջրանցիկ վերարկու | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Կնոջ ամառային վերարկու/հատ/:** Ամառային վերարկու դեղնականաչավուն գույնի 2311 արտիկուլի գործվածքից, 1$մ^2$ մակերային խտությունը՝ 317գր., բաղադրությունը՝ 67% բուրդ, 33% պոլիէսթեր: Ձևածքն ունի կիսանստած ուրվագիծ: Վերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից: Ձախ լանջափեշերը կոճկվում է 4 հատ 18մմ դեղնականաչավուն գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Մեջքը՝ մեջտեղի կարով, հետևամասի ներքևում, կենտրոնից բացվածքով: Թևքերը երկկարանի ներկարված: Ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: ՈՒսի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: ՈՒսադիրների շրջանում 2 փակ օղակներ և 2 կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: Ներդիրը՝ /թիկունքը/ սինտեպոն: Ներդիրի աստառը մգդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Արտաքին | հատ | 11868,00 | 712080 | 60 | ք. Երևան , Այվազովս կու նրբ .5 | 60 | 2018թ. սեպտեմ բերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի Արտադրվում են 44/2 մինչև 56/4 չափս-հասակի: Ապրանքի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակը, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը**՝եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | |
| 5 | 18311120/1/10/2 | կիսավարտի քներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | ***Բամբակյա կիսավարտիք/հատ/:*** Կիսավարտիքի գործվածքը տրիկոտաժե, բաղադրությունը 100% բամբակ, 1մ² մակերեսային խտությունը ոչ պակաս 140գր., սև գույնի: Բաղադրության, քաշի թույլատրելի շեղումը 2%: Կիսավարտիքը կազմված է առաջամասերից, ետնամասերից և շեքամասի հավելյալ կտորից: Առաջամասը հետնամասին միանում է կողքերին կրկնակարով և շեքամասի հավելյալ կտորով: Կիսավարտիքի վերևի եզրերը մշակված են սև գույնի 2սմ ոչ պակաս լայնությամբ բաց կարով, ամրացված էլաստիկ ժապավենով: Կիսավարտիքի ներսի կարի տակից կարվում է չափսի ստուգիչ պիտակ: Արտադրվում են 44-56 չափսերի / 48-25%, 50-27%, 52-27%, 54-15%. 56-6%/: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ հակերով, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 10 հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը: | հատ | 327,00 | 981000 | 3000 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 3000 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |
| 10 | 18331200/1/10/2 | վերնաշապիկներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ գույնի (հատ) ԳՕՍՏ 19867-93:** Արտիկուլ-82007, 82039 գործվածքից, 1մ² քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր: Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից գործվածքի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտադրվում են 38/2-46/6 չափս- | հատ | 2559,00 | 716520 | 280 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 280 | 2018թ. հունիսի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հասակների: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: | | | | | | | |
| 11 | 18331200/2/10/2 | վերնաշապի կներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ գույնի (հատ)** ԳՕՍՏ 19867-93: Արտիկուլ-82007, 82039 գործվածքից 1մ² քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր: Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտաձող: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից գործվածքի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ՝ մնացածը 11մմ երկու անցքով: Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: | հատ | 2388,00 | 477600 | 200 | ք. Երևան, Այվազովսկու նրբ .5 | 200 | 2018թ. հունիսի 30-ը |
| 12 | 18331200/3/10/2 | վերնաշապի կներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Վերնաշապիկ՝ երկարաթև, դեղնականաչավուն գույնի (հատ)** ԳՕՍՏ 19867-93: Արտիկուլ-82007, 82039 գործվածքից, 1մ² քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիէսթեր: Տղամարդու վերնաշապիկը | հատ | 2490,00 | 996000 | 400 | ք. Երևան, Այվազովսկու նրբ .5 | 400 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Կոճակները ջերմակայուն(չհալող) պլաստմասսայից գործվածքի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: | | | | | | | |
| 13 | 18331200/4/10/2 | վերնաշապիկներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Վերնաշապիկ՝ կարճաթև, ղեղնականաչավուն գույնի (հատ)** ԳՕՍՏ 19867-93: Արտիկուլ-82007, 82039 կամ համարժեք գործվածքից, 1մ² քաշը 180գր., բաղադրությունը՝ 33% վիսկոզա, 67% պոլիեսթեր: Տղամարդու վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտաձող: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասսայից գործվածքի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ՝ մնացածը 11մմ երկու անցքով: Արտադրվում են 38/2-46/6 չափս-հասակների: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող | հատ | 2313,00 | 1387800 | 600 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 600 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: | | | | | | | |
| 17 | 18421100/1/10/2 | թաշկինակներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Թաշկինակ /հատ/:** Գործվածքը 100% բամբակյա, 1մ² մակերեսային խտությունը՝ ոչ պակաս 120գր.: Պատրաստի արտադրանքի չափսերը 38.5 x 38.5 սմ, եզրերը կարված: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Պարկերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: | հատ | 78,00 | 390000 | 5000 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 5000 | 2018թ. հունիսի 30-ը |
| 24 | 18421170/1/10/2 | գոտիներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Գոտկատեղի կաշվե գոտի/հատ/:** Բնական սև գույնի կաշվից, 50 մմ լայնությամբ, երկանցք, ճարմանդով, 1 գոտեմակող: Լինում է 4 երկարության 1-ին չափսը՝ -1050մմ /30%/, 2-րդ չափսը՝ -1150մմ /40%/, 3-րդ չափսը՝ - 1250մմ /20%/, 4-րդ չափսը՝ -1500մմ /10%/: Ներսի կողմից մշակվում է բնական գույնի փափուկ կաշվով, ձևավոր զարդակարով, զարդակարի թելերը սև գույնի: Կաշեգոտու վրա պետք է նշված լինի չափսը: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, տուփերը պիտակավորված, պիտակի վրա նշելով արտադրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անումը, չափսը և արտադրման տարեթիվը, (ավագ, կրտսեր սպայական և ենթասպայական կազմի համար): | հատ | 3540,00 | 566400 | 160 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 160 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |
| 25 | 18421170/2/10/2 | գոտիներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Գոտի լայն/հատ/:** Արտադրվում է արհեստական թելից գործված տիսմայից 5,5 սմ լայնությամբ, տիսմայի հաստությունը 3,5 մմ, դեղնականաչավուն գույնի, երիզահանգույցը մետաղյա ճարմանդով, մյուս ծայրին մետաղյա ամրակալներով: Գոտին ամրակալի կողմից կարերով ֆիկսված, իսկ մետաղական ճարմանդը մակօղակով, երկարությունը կարգավորելու համար: Գոտիի ճարմանդի ամրացման ծայրում ներսի կողմից պետք է ունենա կպչուն ժապավեն, 40 սմ երկարությամբ և 4 սմ լայնքով: Գոտին պետք է լինի երեք չափսի՝ 1050մմ /30%/ , 1150մմ /50%/, 1250մմ /20%/ երկարությամբ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ գործարանային, ստվարաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 100 հատ, պիտակավորված, պիտակի վրա նշելով ապրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, մատակարար կազմակերպության անվանումը , արտադրման տարեթիվը, պայմանագրային և ժամկետային գին. ծառայողների համար: | հատ | 945,00 | 567000 | 600 | ք. Երևան , Այվազովսկու նրբ .5 | 600 | 2018թ. սեպտեմբերի 30-ը |
| 26 | 18421170/3/10/2 | գոտիներ | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ | **Տաբատի գոտի/հատ/:** Պաշտպանական գույնի՝ | հա | 471,00 | 282600 | 600 | ք. Երևան , | 600 | 2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | արհեստական թելից գործված տիսմայից, լայնությունը 3 սմ, երիզաhանգույցը՝ մետաղյա ճարմանդով, որի վրա պետք է լինի մետաղական ֆիքսատոր, մյուս ծայրին մետաղյա ամրակալ: Գոտին պետք է լինի երեք չափսի՝ 1000մմ /30%/ , 1100մմ /50%/, 1200մմ /20%/ երկարությամբ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը՝ գործարանային, ստվարաթղթե արկղերով, պիտակավորված, պիտակի վրա նշելով ապրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, մատակարար կազմակերպության անվանումը , արտադրման տարեթիվը, պայմանագրային և ժամկետային զին. ծառայողների համար: | տ | | | | Այվազովս կու նրբ .5 | | սեպտեմ բերի 30-ը |
| 28 | 18421200/1/10/2 | ենթաօձիքնե ր | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Բամբակյա ենթաօձիք/հատ/:** ԳՕUS-1108-84, սպիտակ, 100% բամբակյա 110-120 գր. գործվածքից, (0.45 x 0,045) մ ձևաչափի, եզրերը ծալված են և վրակարված, փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 1000 հատ, տեսականին կապերով, կապերը՝ 100 հատից: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը արտադրման: | հատ | 23,70 | 404250,9 | 17057 | ք. Երևան , Այվազովս կու նրբ .5 | 17057 | 2018թ. սեպտեմ բերի 30-ը |
| 33 | 18811180/1/10/21 | հողաթափեր | ՀՀ, «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ | **Ջորանոցային հողաթափ/զույգ/:** Տակամասը՝ ամբողջական, պատրաստվում է առաջնային պոլիուռետան /գրտաղիմացկուն, ջերմադիմացկուն և մաշադիմացկուն/ հումքից: Տակամասի հաստությունը առաջամասում 10-12մմ. կրնկամասում 22-24մմ: Թաթամասը գոգաձև, ուռուցիկ: Տակամասի վրայից եռակցված է գունաքողարկված, արհեստական մանրաթելերից պատրաստված գործվածք, վրան դրոշմված է հողաթափի չափսը: Երեսամասը՝ խաչաձև պատրաստվում է արհեստական ջրադիմացկուն, գունաքողարկված թելից գործված ժապավենից /տիսմայից/, 38-40 մմ լայնությամբ, 2-2.2մմ հաստությամբ: Երեսամասը տակամասին միանում է ձուլման եղանակով: Ժապավենի վրա 2 մետաղյա կոճգամով միանում է լրացուցիչ շերտ, ծառայողի տվյալների ֆիքսման համար: Արտադրվում է 40-45 չափսերի, /N40 – 20%, N41 – 25%, N42 – 25%, N43 – 15% , N44 – 10%, N45–5%/: Արտաքին տեսքը՝ հաստատված համաձայն նմուշի: Հողաթափը՝ տակամասում չսահող, ձևավոր, պետք է ունենա դրոշմ չափսի վերաբերյալ: Փաթեթավորումը՝ պարկերով: Պարկերը՝ պիտակավորված, պիտակների պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարարող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը: | զույգ | 936,00 | 687960 | 735 | ք. Երևան , Այվազովս կու նրբ .5 | 735 | 2018թ. հունիսի 30-ը |

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

**Ծանոթություն՝**

1. ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից, ապրանքը ընդունում է պահեստապետը:
2. **Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի տես՝** ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N 1750-Ն որոշումը «ՀՀ ազգային անվտանգության մարմինների զինծառայողների միասնական համազգեստի, տարբերանշանների ձևերը և դրանց նկարագրերը հաստատելու մասին»:
3. **Կրման ժամկետը** տես՝ ՀՀ Կառավարության 2015թ. դեկտեմբերի 3-ի N1457-Ն որոշման հավելված N2 համաձայն:
4. Հանդերձանքի յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:
5. Նախքան մատակարարումը սկսելը հանդերձանքի նմուշները համաձայնեցվում են Գնորդի հետ, որից հետո Գնորդը Վաճառողին տրամադրում է հանդերձանքի քանակները՝ ըստ չափերի և հասակների:
6. Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

## ԳՆՈՐԴ

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**

**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի**

**գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ**

**Ա. Հակոբյան**

## ՎԱՃԱՌՈՂ

**«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ**
**ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.**

**«Արդշինբանկ» ՓԲԸ**

**Մասիսի մ/ճ**
**Հ/հ 2472900158630000**
**ՀՎՀՀ 03804898**

**Տնօրեն**

**Վ. Եղիազարյան**

*Հավելված N 2*
*« 18 » 05 20 18թ. կնքված*
*N 11/205-2018 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 18211100/1/10/2 | կիսավերարկու | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1056000 | 1056000 | 1056000 | 1056000 | 1056000 |
| 2 | 18221100/1/10/2 | անջրանցիկ հագուստ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1244640 | 1244640 | 1244640 | 1244640 | 1244640 |
| 3 | 18221200/1/10/2 | անջրանցիկ թիկնոցներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 |
| 4 | 18221400/1/10/2 | անջրանցիկ վերարկու | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 712080 | 712080 | 712080 | 712080 | 712080 |
| 5 | 18311120/1/10/2 | կիսավարտիքներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 981000 | 981000 | 981000 | 981000 | 981000 |
| 10 | 18331200/1/10/2 | վերնաշապիկներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 716520 | 716520 | 716520 | 716520 | 716520 | 716520 | 716520 | 716520 |
| 11 | 18331200/2/10/2 | վերնաշապիկներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 477600 | 477600 | 477600 | 477600 | 477600 | 477600 | 477600 | 477600 |
| 12 | 18331200/3/10/2 | վերնաշապիկներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 996000 | 996000 | 996000 | 996000 | 996000 |
| 13 | 18331200/4/10/2 | վերնաշապիկներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1387800 | 1387800 | 1387800 | 1387800 | 1387800 |
| 17 | 18421100/1/10/2 | թաշկինակներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 | 390000 |
| 24 | 18421170/1/10/2 | գոտիներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 566400 | 566400 | 566400 | 566400 | 566400 |
| 25 | 18421170/2/10/2 | գոտիներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 567000 | 567000 | 567000 | 567000 | 567000 |
| 26 | 18421170/3/10/2 | գոտիներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 282600 | 282600 | 282600 | 282600 | 282600 |
| 28 | 18421200/1/10/2 | ենթաօձիքներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 404250,9 | 404250,9 | 404250,9 | 404250,9 | 404250,9 |
| 33 | 18811180/1/10/21 | հողաթափեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 687960 | 687960 | 687960 | 687960 | 687960 | 687960 | 687960 | 687960 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

***** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:***

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԱԾ<br>ք.Երևան, Նալբանդյան104 | «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ<br>ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող. |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| գործառնական վարչություն<br>Հ/հ 900011301067<br>ՀՎՀՀ 01507079 | Մասիսի մ/ճ<br>Հ/հ 2472900158630000<br>ՀՎՀՀ 03804898 |
| Տնօրենի տեղակալ | Տնօրեն |
| Ա. Հակոբյան | Վ. Եղիազարյան |

*Հավելված N 3*
*«       »         20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հh ____________ | հh ____________ |
| հվհh ____________ | հվհh ____________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «              » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »      20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________________
Գնորդի անվանումը

Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>Ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |